## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՄԱԾՁԲ-4-11

ք. Երևան 05.04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊժԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և *«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի,* ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված (5) հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 9500000 /ինը միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Սպառազինության վարչությունը:

### 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ [illegible]2502457

ՀՀ ՊՆ ՆՏԱ դե[illegible] ՊԺԿ

[illegible]. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22
<Ամերիա բանկ> ԲԲԸ,
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ [illegible]1567689

Տնօրեն

[illegible] ԶՐԱՐՅԱՆ

AM 0370214

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-4-11 ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ | Վազք կմ (պարբերականություն) | Toyota Camry | Toyota Hiace | Toyota LC 150 2,7 | Toyota HILUX | Toyota RAV4 2,0 | Toyota LC200 4.6 | Toyota FORTUNER 2,7L | Toyota LC200 4.0 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք |
| 1 | Շարժիչի յուղի և զտիչի փոխարինում | 7,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 2 | Օդի զտիչի փոխարինում | 14,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 3 | Օդորակիչի զտիչի փոխարինում | 14,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 4 | Ավտոմեքենայի յուղման աշխատանքներ | 14,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 5 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում | 40,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 6 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 40,000-70,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 7 | Վառոցքի մոմի փոխարինում 1կ/տ | 70,000-80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 8 | Փոխ.տուփի յուղի փոխարինում,քարտերի/մաքրում | 70,000-80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 9 | Փոխ.տուփի յուղի ավելացում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 10 | Փոխ.տուփի զտիչի փոխարինում | 70,000-80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 11 | Բաժանարար տուփի յուղի փոխարինում | 70,000-80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 12 | Բաժանարար տուփի յուղի ավելացում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 13 | Առջևի կամ հետևի կամրջակի յուղի փոխարինում | 70,000-80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 14 | Արգելակման կոճղակի փոխարինում դիմացի | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 15 | Արգելակման կոճղակի փոխարինում հետևի | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 16 | Ձեռքի արգելակման կոճղակների փոխարինում | 60,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 17 | Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում | 100,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 18 | Շարժիչի հովացման հեղուկի ավելացում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 19 | Ապակելվացիչ չսառչող հեղուկի լիցքավորում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 20 | Արգելակման հեղուկի փոխարինում | 100,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 21 | Արգելակման հեղուկի ավելացում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 22 | Արգելակման համակարգի կարգավորում, օդահանում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 23 | Ղեկի հիդրոուժեղարարի յուղի փոխարինում | 100,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 24 | Ղեկի հիդրոուժեղարարի յուղի ավելացում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 25 | Վերևի լծակի վռանների փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 26 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 27 | Լծակի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 28 | Կայունարարի վռանների փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 29 | Կայունարարի կանգնակի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 30 | Անվարացքի կարգավորում (ռազվալ) | - | 14,000 | 14,000 | 14,000 | 14,000 | 14,000 | 14,000 | 14,000 | 14,000 |
| 31 | Անվադողերի փոխարինում | - | 7,000 | 7,000 | 7,000 | 7,000 | 7,000 | 8,000 | 7,000 | 8,000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 32 | Անվադողերի բալանսավորում | - | 7,000 | 7,000 | 7,000 | 7,000 | 7,000 | 8,000 | 7,000 | 8,000 |
| 35 | Ինժեկտորների լվացում | - | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 36,000 | 18,000 | 27,000 |
| 37 | Էլեկտրական համակարգի մասնակի նորոգում | - | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 | 6000-250000 |
| 38 | Համակարգչային ախտորոշում թերությունների վերացումով | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 39 | Հեռահար լամպի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 40 | Մոտակա լամպի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 41 | Հակամառախուղային լամպի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 42 | Արգելակի լամպի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 43 | Արգելակման սկավառակի հղկում (զույգը) | - | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 |
| 44 | Շարժիչի փոկի փոխարինում | 80,000 կմ | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 45 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 46 | Շարժիչի փոկի ձգանի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 47 | Օդորակիչի լիցքավորում | - | 30,000 | 60,000 | 30,000 | 30,000 | 30,000 | 60,000 | 30,000 | 30,000 |
| 48 | Հողակապի դրսի կամ ներսի փոշեթիկնոցի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 49 | Փականագործական աշխատանքներ՝ 1 ժ | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 50 | Լծակի հեղուսի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 51 | Զսպակի վռանի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 52 | Մետաղաձողի վռանի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |
| 53 | Շարժիչի բարձիկի փոխարինում | - | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար | Անվճար |

| ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ | | Վազք կմ (պարբերաբար) | Toyota Camry | Toyota Hiace | Toyota LC 150 2,7 | Toyota HILUX | Toyota RAV4 2,0 | Toyota LC200 4.6 | Toyota FORTUNE R 2,7L | Toyota LC200 4.0 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք | Երաշխիք |
| 1 | Փոխանցման տուփի յուղ 1լ | 70,000-80,000 կմ | 7,000 | 8,000 | 8,000 | 9,000 | 13,000 | 8000 | 8000 | 8000 |
| 2 | Փոխանցման տուփի զտիչ | - | 22,000 | - | 28,000 | - | - | 25000 | 33000 | 33000 |
| 3 | Փոխանցման տուփի միջադիր | - | 6,000 | - | - | - | 10,000 | 15000 | 17000 | 17000 |
| 4 | Շարժիչի յուղի զտիչ | - | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 6000 | 5000 | 5000 |
| 5 | Շարժիչի յուղ 1լ | 7000 կմ | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5000 | 5000 | 5000 |
| 6 | Շարժիչի հովացման հեղուկ 1լ | 100,000 կմ | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 7 | Ապակիների չսառչող հեղուկ 1լ | - | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 8 | Հիդրավլիկի յուղ 1լ | 100,000 կմ | - | 5,000 | 5,000 | 5,000 | - | 5,000 | 5,000 | 5,000 |
| 9 | Արգելակման հեղուկ 1լ | 100,000 կմ | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 |
| 10 | Հեռակա լամպ 2 հատ | - | 18,000 | 44,000 | 18,000 | 34,000 | 26,000 | - | 22000 | - |
| 11 | Մոտակա լամպ 2 հատ | - | 154,000 | 44000 | 18,000 | 34000 | 174,000 | - | 22000 | - |
| 12 | Հակամառախուղային լամպ 2 հատ | - | 18,000 | 10,000 | 18,000 | - | 28,000 | - | 28000 | - |
| 13 | Արգելակման կոճղակ դիմացի 1 կ/տ | 20,000 կմ | 42,000 | 47,000 | 41,000 | 47,000 | 34,000 | 43000 | 63,000 | 43000 |
| 14 | Արգելակման կոճղակ հետևի 1կ/տ | 60,000 կմ | 28,000 | 57,000 | 28,000 | 60,000 | 47,000 | 28000 | 50,000 | 28000 |
| 15 | Շարժիչի փոկ | 80,000-90,000 կմ | 33,000 | 45,000 | 45,000 | 35,000 | 22,000 | 45000 | 45,000 | 45000 |
| 16 | Վառելիքի զտիչ | 40,000 կմ | 29,000 | 52,000 | 25,000 | 22,000 | 55,000 | 24000 | 25,000 | 25000 |
| 17 | Օդի զտիչ | 14,000 կմ | 13,000 | 8,000 | 13,000 | 18,000 | 8,000 | 18000 | 18,000 | 18000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Օդորակիչի զտիչ | 20,000 կմ | 15,000 | 15,000 | 15,000 | 15,000 | 15,000 | 15000 | 15,000 | 15000 |
| 19 | Վառոցքի մոմ 1հատ | 70,000-80,000 կմ | 9,500 | 7,000 | 10,000 | - | 7,000 | 7000 | 15,000 | 10000 |
| 20 | Բաժանարար տուփի յուղ 1լ | 50,000կմ | - | - | 9,000 | 9000 | 9,000 | 9000 | 9,000 | 9000 |
| 21 | Կամրջակի յուղ 1լ | 50,000կմ | - | 9,000 | 9,000 | 9000 | 9,000 | 9000 | 9,000 | 9000 |
| 22 | Լծակի հեղյուս մանեկով ներքևի 1 կ/տ | - | 18,000 | 20,000 | 25,000 | 18000 | 21,000 | 25000 | 23,000 | 23000 |
| 23 | Լծակի հեղյուս մանեկով վերևի 1 կ/տ | - | - | 22,000 | 22,000 | 17000 | 18,000 | 20000 | 20,000 | 20000 |
| 24 | Լծակի վռաններ վերևի 1կ/տ | - | - | 84,000 | 72,000 | - | - | 72000 | - | 72000 |
| 25 | Լծակի վռաններ ներքևի 1կ/տ | - | 180,000 | 50,000 | 90,000 | 128000 | 94,000 | 146000 | 128,000 | 146000 |
| 26 | Կայունարարի վռաններ առջևի 1կ/տ | - | 10,000 | 16,000 | 12,000 | 22000 | 24,000 | 26000 | 20,000 | 16000 |
| 27 | Կայունարարի վռաններ հետևի 1կ/տ | - | 8,000 | - | 10,000 | - | 12,000 | 14000 | 16,000 | 12000 |
| 28 | Կայունարարի կանգնակներ առջևի 1կ/տ | - | 60,000 | 80,000 | 64,000 | 110000 | 50,000 | 94000 | 108,000 | 74000 |
| 29 | Կայունարարի կանգնակներ հետևի 1կ/տ | - | 76,000 | - | 68,000 | - | 66,000 | 40000 | 66,000 | 26000 |
| 30 | Ինժեկտորի մաքրման հեղուկ | 20,000կմ | 7,000 | 7,000 | 7,000 | 7000 | 7,000 | 7000 | 7,000 | 7000 |
| 31 | Ձեռքի արգելակման կոճղակ 1կ/տ | 60,000 կմ | 45,000 | 57,000 | 50,000 | 50,000 | 20,000 | - | 52,000 | 52000 |
| 32 | Արգելակման լարերի յամպ 1 հատ | - | 2,000 | 2,000 | 2,000 | 4,000 | 2,000 | - | - | - |
| 33 | Շարժիչի փոկի հոլովակ 1 հատ | - | - | 21,000 | 21,000 | 105,000 | - | 70000 | 30,000 | 72000 |
| 34 | Շարժիչի փոկի ձգան 1 հատ | - | 83,000 | 86,000 | 86,000 | 84,000 | - | 31000 | 85,000 | 110000 |
| 35 | Հողակապի փոշեթիկնոց դրսի 1կ/տ | - | 50,000 | - | 42,000 | 50,000 | 50,000 | 42000 | 50,000 | 42000 |
| 36 | Հողակապի փոշեթիկնոց ներսի 1կ/տ | - | 28,000 | - | 28,000 | 32,000 | 28,000 | 33000 | 32,000 | 33000 |
| 37 | Ապակեմաքրիչի ռետիններ 1կ/տ | - | 23,000 | 30,000 | 22,000 | 17,000 | 26,000 | 22000 | 22,000 | 22000 |
| 38 | Զսպակի վռան 1կ/տ | - | - | 52,000 | - | 35,000 | - | - | - | - |
| 39 | Մեղմազանոի վռան 1կ/տ | - | - | - | - | - | - | - | - | - |
| 40 | Մեղմազանոի 1կ/տ | - | 236,000 | - | 364,000 | - | 596,000 | 352000 | 213000 | 344000 |
| 41 | Շարժիչի բարձիկ վերևի | - | 50,000 | - | 54,000 | - | 90,000 | - | 45,000 | 77000 |
| 42 | Շարժիչի բարձիկ հետևի | - | 95,000 | 32,000 | 57,000 | 53,000 | 57,000 | 70000 | 54,000 | 70000 |
| 43 | Շարժիչի բարձիկ աջ | - | 92,000 | 35,000 | - | 32000 | 28,000 | 78000 | 45,000 | 77000 |
| 44 | Շարժիչի բարձիկ ձախ | - | 98,000 | 35,000 | - | 32000 | 67,000 | 78000 | 45,000 | 72000 |

**Ծառայության մատուցումը՝ իրականացնել 2018թ. 2-րդ,3-րդ,և 4-րդ եռամսյակներում ըստ պատասխանատու ստորաբաժանման ներկայացված հայտերի, սակայն ոչ ուշ քան 10.12.2018թ :**
Փոխված դետալների ժամանակից շուտ խափանման համար պատասխանատվություն է կրում մատուցողը:
Այլ պահանջներ - ծառայության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի
պահեստամասերի, քսայուղերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է
ծառայությունը մատուցողի կողմից:
Մատուցվող Տոյոտա մակնիշի ավտոմեքենաների ծառայությունների [illegible] առավելագույն գինը կազմում է **9,500,000** (ինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ Դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության [illegible]

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի [illegible]

[illegible]ՅԵՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Տոյոտա [illegible]»

Տնօրեն

[illegible]ՋԲԱՐՅԱՆ

Հավելված № 2
№ ՄԱԾՁԲ-4-11 ծածկագրով գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| Հ/հ | Ծառայության անվանում | CPV-ի կոդը՝ | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություններ | 71631260/1 | 3200000 | 3200000 | 3200000 | 6400000 | 6400000 | 6400000 | 9500000 | 9500000 | 9500000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Տոյոտա [illegible] ՍՊԸ

Տնօրեն

[illegible] ՁՐԱՐՅԱՆ

AM 0320214

**Հավելված N 3**
**ՄԱԾՁԲ-4-11 ծածկագրով գնման պայմանագրի**

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
ՀՀ ___________________________

______________________________

ՀՎՀՀ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
ՀՀ___________________________

______________________________

ՀՎՀՀ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      »«                »20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____________________________________________________________

____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
*Պատվիրատու՝ ի դեմս _______________________________________________ և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

**Հավելված N 3.1**
**ՄԱԾՁԲ-4-11 ծածկագրով գնման պայմանագրի**

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ————————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ——— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________ _______________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_______________________ _______________________
ստորագրություն ստորագրություն

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

Երաշխիքային սպասարկման մեջ գտնվող ավտոմեքենաների ձեռքբերման պայմանագրերի վերաբերյալ:

| Ավտոմեքենայի մակնիշը | Մատակարարող կազմակերպությունը | Պայմանագրի համարը | Պայմանագրի ամսաթիվը | Երաշխիքային ժամկետը |
|---|---|---|---|---|
| Տոյոտա-Լենդ-կրաուզեր 4.6 | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 342 | 23.12.2017թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Լենդ-կրաուզեր 4.0 | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | ԳՀԱՊՁԲ-4/13-1 | 17.11.2017թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա- Լենդ-կրաուզեր Պրադո 2.7 | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | ՓԾՀԱՊՁԲ- 4/2-1 | 10.07.2015թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա- Լենդ-կրաուզեր Պրադո 2.7 | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 342 | 23.12.2016թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Ֆորտյուներ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | ԳՀԱՊՁԲ-4/13-1 | 17.11.2017թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Ֆորտյուներ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 306 | 21.12.2017թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Ֆորտյուներ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 269 | 17.11.2017թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Ֆորտյուներ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 122 | 22.07.2016թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Հայլուքս ՏԳԻ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | ՓԾՀԱՊՁԲ-4/2-1 | 10.07.2015թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Ռավ-4 | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | ՓԾՀԱՊՁԲ-4/2-1 | 10.07.2015թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Հայլուքս ՏԳԻ | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Ավտոմեքենայի մատակարարման մասին պայմանագիր № 075 | 10.07.2015թ | 3 տարի կամ 100.000 կմ |
| Տոյոտա-Քեմրի | «Տոյոտա- Երևան» ՍՊԸ | Առուվաճառքի պայմանագիր № 106 | 23.12.2016թ | 3 տարի կամ 100.000 կմ |

ՀՀ ՁՈՒ ՍՎ ԱՎՏՈՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

գնդապետ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-4/13-1**

ք. Երևան 17.11.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **գնման ժամանակացույցով սահմանված վերջնաժամկետից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տույժը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **գնման ժամանակացույցով սահմանված վերջնաժամկետից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժ:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 76 050 000 (յոթանասունվեց միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարի կամ 100 000 կմ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺՇ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան Արարատյան 117/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100
ՀՎՀՀ 01557589
Գլխավոր տնօրեն
Հ/Ք 600302174 Վ. ԳԶՐԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-4/13-1 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Բնութագրող հիմնական հատկանիշները | | Ապրանքային նշանը | Արտադրողի անվանումը | Ծագման երկիրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ջիպեր (Ամենագնաց) (Fortuner) | Շարժիչի տեսակը | VVT-I, բենզինային | TOYOTA | TOYOTA MOTORS | Ճապոնիա |
| | | Շարժիչի հզորությունը | 165 ձիաուժ, աշխատանքային ծավալը 2.7 լ | | | |
| | | Փոխանցումների տուփը | 6 աստիճան, ավտոմատ | | | |
| | | Չափսերը, երկ/լայն/բարձր,մմ | 4795/1855/1835 | | | |
| | | Ճանապարհային լուսածերպ, մմ | 225մմ | | | |
| | | Վառելիքի ծախսը (100 կմ), լիտր | 8-13 լ | | | |
| | | Թողարկման տարեթիվը | ոչ շուտ, քան 2017թ. | | | |
| | | Նստատեղերի քանակը | 7, ներառյալ վարորդինը | | | |
| | | Երաշխիքը | առնվազն 3 տարի կամ 100 000 կմ | | | |
| | | Կոմպլեկտավորումը | ABS (արգելակների բլոկավորման համակարգ), լրիվ էլեկտրափաթեթ (բոլոր ապակիների և հայելիների էլ.կառավարում), կենտրոնական փական, սրահի ձևավորումը՝ կտոր, ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ և շարժական ղեկանիվ, սենսորային մոնիտոր CD/MP3/BLUETOOTH և AUX/USB հնարավորություններով, առջևի հակամշուշային լապտերներ | | | |
| | | Գույնը | մոխրագույն | | | |
| | | Անվահեծերը | թեթևաձույլ | | | |
| | | Անվադողերը | R17 | | | |
| 2 | Ջիպեր (Ամենագնաց) (Land Cruiser) | Շարժիչի տեսակը | Dual VVT-i, բենզինային | TOYOTA | TOYOTA MOTORS | Ճապոնիա |
| | | Շարժիչի հզորությունը | 275 ձիաուժ, աշխատանքային ծավալը 4.0 լ | | | |
| | | Փոխանցումների տուփը | 5 աստիճան, ավտոմատ, միջխեռային դիֆերենցիալի և հետևի կամրջակի բլոկավորումով | | | |
| | | Չափսերը, երկ/լայն/բարձր, մմ | 4950/1890/1950 | | | |
| | | Ճանապարհային լուսածերպ, մմ | 240մմ | | | |

| | |
|---|---|
| Վառելիքի ծախսը (100 կմ), լիտր | 14-18 լ |
| Թողարկման տարեթիվը | ոչ շուտ, քան 2017թ. |
| Նստատեղերի քանակը | 7, ներառյալ վարորդինը |
| Երաշխիքը | առնվազն 3 տարի կամ 100 000 կմ |
| Կոմպլեկտավորումը | ABS (արգելակների բլոկավորմանման համակարգ), VSC (կուրսորային կայունության համակարգ), առնվազն 8 անվտանգության բարձիկ, կլիմատ – կոնտրոլ, լրիվ էլեկտրափաթեթ (բոլոր ապակիների և հայելիների էլ.կառավարում), կենտրոնական փական հեռակառավարմամբ, վարորդի նստատեղ էլ. կառավարում, շարժիչի մեկնարկումը «Start-stop» կոճակի օգնությամբ, առջևի և հետևի կայանման սենսորներ (Parktronic), հետին ընթացքի տեսախցիկ, լյուկ՝ էլ. կառավարմամբ, առջևի հակամշուշային լապտերներ |
| Գույնը | սև կամ մոխրագույն |
| Անվահեծերը | թեթևաձույլ |
| Անվադողերը | R18 |

- Անվադողերը և կուտակիչ մարտկոցները ոչ շուտ, քան 2017թ.-ի արտադրության,
- ավտոմեքենաները պետք է լինեն նոր, չօգտագործված և սպասարկված,
- ապրանքները պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 84029 զորամաս (ք. Եղվարդ, զինավան),

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը ՀՀ (դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարման ենթակա քանակները՝ ըստ 2017թ. համապատասխան եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ. |
| 1 | Ջիպեր (Ամենագնաց) (Fortuner) | հատ | 3 | 15 850 000 | 47 550 000 | 3 |
| 2 | Ջիպեր (Ամենագնաց) (Land Cruiser) | հատ | 1 | 28 500 000 | 28 500 000 | 1 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԱԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ

Գլխավոր տնօրեն

Վ. ԳԶՐԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-4/13-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝(տոկոսներով) | |
|---|---|---|---|---|
| | | | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.17թ |
| 1 | Ջիպեր (Ամենագնաց) | 34111150/20/10/2 | 47 550 000 | 47 550 000 |
| 2 | Ջիպեր (Ամենագնաց) | 34111150/21/10/2 | 28 500 000 | 28 500 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ

Գլխավոր տնօրեն

Վ/Կ 00302174

Ա. Եւկայան

Վ. ԳԶՐԱՐՅԱՆ

**Հավելված N 3**
**N ԳՀԱՊՁԲ-4/13-1 պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «                » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**
**N ԳՀԱՊՁԲ-4/13-1 պայմանագրի**

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և _______________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _______________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________
ազգանուն, անուն

_______________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________
ազգանուն, անուն

_______________
ստորագրություն

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N342 ՊՇ.

Ավտոմեքենայի մատակարարման մասին

ք. Երևան «23» Դեկտեմբերի 2016թ.

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (ՍՊԸ)-ն (այսուհետ՝ Մատակարար) ի դեմս Գլխավոր տնօրեն Վ.Գզրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,որպես «Վաճառող», մի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ «Ստացող»,մյուս կողմից ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն (ՓԲԸ)-ն «Վճարող», հետագա միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր»,իսկ առանձին հիշատակման դեպքում՝ «Կողմ»,կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է սահմանված ժամկետում Գնորդի սեփականությանը հանձնել սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը կազմող № 1 հավելվածով (այսուհետ՝Հավելված 1) սահմանված մակնիշի, տեսակի, քանակի և կոմպլեկտայնության ավտոմեքենան (այսուհետ՝Ավտոմեքենա), իսկ Գնորդը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում ընդունել իրեն հանձնվող Ավտոմեքենան ու վճարել դրա դիմաց:

2. Մատակարարման պայմաններն ու Ավտոմեքենայի հանձնում-ընդունումը

2.1. Սույն պայմանագրի շրջանակներում Ավտոմեքենայի հանձնում-ընդունումն իրականացվելու է Մատակարարի խանութ-սրահից՝ ՀՀ, ք.Երևան, Ծ.Իսակովի 22 հասցեից:

2.2. Ավտոմեքենայի մատակարարումն իրականացվելու է սույն պայմանագրի ստորագրման օրվանից մինչև 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

2.3. Ավտոմեքենայի մատակարարման նպատակով այն օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ներկրելու և մաքսազերծելու հետ կապված բոլոր գործողությունները՝ ներառյալ մաքսային ձևակերպումների շրջանակներում համապատասխան գումարներ (մաքսավճար, մաքսատուրք, ավելացված արժեքի հարկ և այլն) վճարելը կատարվում են Մատակարարի կողմից և Մատակարարի հաշվին:

2.4. Ավտոմեքենայի մատակարարումը համարվում է ավարտված Հավելված 1-ով սահմանված մակնիշի, տեսակի ու կոմպլեկտայնության Ավտոմեքենան սույն պայմանագրի 2.1. կետով սահմանված վայրում (դրանցից մեկում) Գնորդին հանձնելու փաստով, որի մասին կազմվում է համապատասխան հանձնման-ընդունման ակտ: Ավտոմեքենան Գնորդին (նրա ներկայացուցիչներին) հանձնելիս Մատակարարը հանձնում է նաև օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց մաքսազերծումը հաստատող փաստաթղթեր և համապատասխան հաշիվ ապրանքագիր:

2.4.1. Ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտը կազմվում է Մատակարարի կողմից՝ երեք օրինակից: Դրանք Գնորդին են ներկայացվում Մատակարարի կողմից ստորագրված և կնքված վիճակում վերջինիս կողմից Ավտոմեքենայի ընդունելու պահին:

2.4.2. Գնորդը հանձնման-ընդունման ակտը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը:

2.4.3. Ավտոմեքենան Գնորդի կողմից համարվում են ընդունված հանձնման-ընդունման ակտը վերջինիս կողմից ստորագրելու և կնքելու պահից:

3. Ավտոմեքենայի որակը

3.1. Մատակարարը երաշխավորում է հանձնված Ավտոմեքենայի որակի համապատասխանությունը տվյալ մակնիշի, տեսակի ու կոմպլեկտայնության Ավտոմեքենայի համար արտադրողի կողմից սահմանված ստանդարտներին ու սույն պայմանագրի պահանջներին:

4. Ավտոմեքենայի երաշխիքային սպասարկումը

4.1. Մատակարարի կողմից Ավտոմեքենայի համար սահմանվում է երաշխիքային սպասարկում 3(երեք) տարվա կամ 100 000 (մեկ հարյուր հազար) կիլոմետր վազքի համար՝ որն առաջինը վրա կհասնի:

4.2. Երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է Ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

4.3. Երաշխիքային սպասարկումն իրականացվում է Մատակարարի կողմից տրամադրված համապատասխան երաշխիքային գրքույկի:

5. Պայմանագրի գինը և վճարման կարգը

5.1. Ավտոմեքենայի գինը կազմում է 40,400,000 (Քառասուն միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գնորդի կողմից ավտոմեքենայի գինը պետք է վճարվի սույն պայմանագրի ստորագրման օրվանից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

5.2. Ավտոմեքենայի գինը ներառում է ինչպես Ավտոմեքենայի ձեռք բերման հետ կապված Մատակարարի բոլոր ծախսերը, այնպես էլ ՀՀ ներկրման ու սույն պայմանագրի 2.1. կետով սահմանված վայր դրանց փոխադրման հետ կապված բոլոր ծախսերը:

6. Կողմերի իրավունքները և պարտականությունները

6.1. Գնորդն իրավունք ունի՝

6.1.1. սույն պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից Ավտոմեքենայի չհանձնելու դեպքում՝

ա) հրաժարվել Ավտոմեքենայի ընդունելուց և Մատակարարից պահանջել վերադարձնել վճարված գումարը.

բ) իր հայեցողությամբ սահմանել Ավտոմեքենայի հանձման նոր ժամկետ և Մատակարարից պահանջել վճարել սույն պայմանագրով սահմանված տույժը.

6.1.2. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

6.1.2.1. Մատակարարի կողմից սույն պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) հանձնվել է ոչ պատշաճ որակի Ավտոմեքենա, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) խախտվել են Ավտոմեքենայի հանձնման ժամկետները:

6.2. Գնորդը պարտավոր է՝

6.2.1. Կատարել սույն պայմանագրով նախատեսված գումարի վճարում, Մատակարարի հաշվարկային հաշվին, սույն պայմանագրում նշված ժամկետներում.

6.2.2. Ուսումնասիրել և ընդունել տեխնիկական բնութագրին համապատասխան հանձնված Ավտոմեքենան և հայտնաբերված անհամապատասխանությունների ու թերությունների մասին գրավոր տեղեկացնել Մատակարարին անհապաղ կամ ողջամիտ ժամկետում այն բանից հետո, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ավտոմեքենայի բնույթից և նշանակությունից.

6.2.3. Սույն պայմանագրով նախատեսված վայրում և ժամետում ընդունել Ավտոմեքենան և կատարել սույն պայմանագրին համապատասխան հանձնվող Ավտոմեքենայի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ստորագրելով համապատասխան հանձնման-ընդունման ակտը.

6.2.4. Մատակարարի հանձնած Ավտոմեքենայի սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ Ավտոմեքենայի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

6.2.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրով սահմանված տույժը և տուգանքը:

6.3. Մատակարարն իրավունք ունի՝

6.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան հանձնվող Ավտոմեքենան.

6.3.2. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ հանձնել Ավտոմեքենան.

6.3.3. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Գնորդը բազմիցս խախտել է սույն պայմանագիրը:

6.4. Մատակարարը պարտավոր է՝

6.4.1. Ավտոմեքենան Գնորդին հանձնել սույն պայմանագրի 2.1. կետում նշված վայրում՝ մաքսազերծված վիճակում.

6.4.2. Ավտոմեքենան Գնորդին հանձնել սույն պայմանագրի Հավելված 1-ի պահանջներին համապատասխան.

6.4.3. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրով սահմանված տույժն ու տուգանքը.

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Մատակարարը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետների պահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի շրջանակներում Գնորդի սեփականությանը հանձնված Ավտոմեքենայի որակի համար:

7.2. Մատակարարի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Մատակարարից հօգուտ Գնորդի գանձվում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

7.3. Մատակարարի կողմից սույն պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ավտոմեքենայի հանձնման դեպքում Մատակարարից հօգուտ Գնորդի գանձվում է նաև տուգանք՝ հանձնման ենթակա Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

7.4. Գնորդի կողմից սույն պայմանագրի 5.3. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.5. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում սույն պայմանագրով իրենց ստանձնած պայմանագրային պարտավորությունները լրիվ ծավալով կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.2. Սույն պայմանագրի շրջանակներում ճանապարհային անանցանելիությունը պարտավորությունների կատարման ժամկետը կասեցնելու համար որպես հարգելի հանգամանք կարող է դիտվել այդ մասին Գնորդին պատշաճ ծանուցելու պարագայում:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:

9.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.3. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու իրավաբանական օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է Կողմերից յուրաքանչյուրին:

9.4. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի

կարգերով: սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև սույն պայմանագրի բոլոր հավելվածները կցվում են սույն պայմանագրին համապատասխան և դրա անբաժանելի մասը:

9.5. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված՝ համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.6. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Վաճառող | Վճարող |
| --- | --- |
| «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ | ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն(ՓԲԸ) |
| Իրավ.հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3 | Հասցե՝ ք.Երևան, Հյուսիսային Պող. 1 |
| Գործ.հասցե ք.Երևան, Ծ.Իսակովի 22 | |
| ՀՎՀՀ 01557589 | ՀՎՀՀ 02589581 |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 15700-03667300100 | Հ/Հ 1570003731650100 |
| Վ.Գզրարյան | Ք.Գրիգորյան |
| Գլխավոր տնօրեն | Գլխավոր տնօրեն |

Ստացող

ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե ք.Երևան, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՖԻՆ.նախ.գործ.վարչ
Հ/Հ 900011144137

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետ
Կ.Կարապետյան

### Մատակարարվող Ավտոմեքենայի մակնիշը, տեսակը, կոմպլեկտայնությունը և քանակը

| Հ/Հ | Ավտոմեքենայի մակնիշը, տեսակը և կոմպլեկտայնությունը | Չ/մ | Քանակ ը | Միավորի գինը ՀՀ դրամ | Ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | TOYOTA LC200 4,6L GAS | հատ | 1 | 40,400,000 | 40,400,000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 40,400,000 |

Վաճառող

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Իրավ.հացե ք. Երևան, Բայրոնի փող. 3
Գործ.հասցե ք.Երևան, Ծ.Իսակովի 22
ՀՎՀՀ 01557589
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100

Վ.Չզրարյան
Գլխավոր տնօրեն

Վճարող

ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական
Ընկերություն(ՓԲԸ)
Հասցե՝ ք.Երևան, Հյուսիսային Պող. 1
ՀՎՀՀ 02589581
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100

Ա.Գրիգորյան
[illegible]

Ստացող

ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե ք.Երևան, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ֆինանսների գործ[illegible]
Հ/Հ 900011144187

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետ
Կ.Կարապետյան

Հանձնման-ընդունման ակտ

«23» Դեկտեմբերի 2016թ.

ք. Երևան

Համաձայն 2016 թ. Դեկտեմբերի 23–ին ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն(ՓԲԸ)-ի և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն հանձնեց, իսկ ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն(ՓԲԸ)-ն ընդունեց 40,400,000 (Քառասուն միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով , ներառյալ ԱԱՀ, Toyota LC200 4,6L GAS մակնիշի թվով 1(մեկ) հատ ավտոմեքենա՝ հետևյալ տեխնիկական տվյալներով.

| | |
|---|---|
| Մակնիշը | TOYOTA /ՏՈՅՈՏԱ/ |
| Մոդելը | LC200 4,6L GAS |
| Թափքի տեսակը | Ունիվերսալ 5 դուռ |
| Գույնը | Սև մետալիկ |
| Թողարկման տ/թ | 2016թ. |
| Նույնականացման համարը | JTMHX02J004137422 |
| Շարժիչի համարը | 0640434 |
| Շարժիչի հզորությունը | 309 ձիաուժ |
| Տրանզիտ պետհամարանիշ | 5899 AB |

Վաճառող

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Իրավ.հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3
Գործ.հասցե ք.Երևան, Ս.Իսակովի 22
ՀՎՀՀ 01557589
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100

Կ.Գզրարյան
Գլխավոր տնօրեն

Գնորդ

ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն(ՓԲԸ)
Հասցե՝ ք.Երևան, Հյուսիսային Պող. 1
ՀՎՀՀ 02589581
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100

Գ.Գրիգորյան
Գլխավոր տնօրեն

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО СТРАХОВАЯ КОМПАНИЯ "РОСГОССТРАХ АРМЕНИЯ" "ROSGOSSTRAKH ARMENIA" CLOSED JOINT-STOCK COMPANY 02589581

Ստացող

ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ֆինանսների նախ.գործ.վարչ
Հ/Հ 900011244137

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետ
Կ.Կարապետյան

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ — Ա6745604482

## Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 23 | Դեկտեմբեր | 2016 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 23 | Դեկտեմբեր | 2016 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 6745604482 |

| Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|
| | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 23 Դեկտեմբեր, 2016 թ. | 342 |

| | |
|---|---|
| [7] | |
| [8] | |
| [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

### Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 5 7 5 8 9 |
| [12] Անվանումը | «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 5 7 5 8 9 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ — N 1570003667300100 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿԵՆՏՐՈՆ ԲԱՅՐՈՆԻ Փ. 3 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | Երևան, Շովական Իսակով 22 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

### Ապրանքներ ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 0 8 6 7 4 1 5 |
| [19] Անվանումը | ՀՀ ՊՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿ.ԱՊԱՀՈՎ.ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ Պետական կառավարչական հիմնարկ |
| [20] Բանկային տվյալները | ՀՀ Ֆին.նախ.գործ.վարչ — N 900011144137 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Բագրևանդի 5 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |
| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | Երևան, Բագրևանդի 5 |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

[redacted]

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | TOYOTA LC200 4.6 GAS | հատ | 1 | 33666666.67 | 33666666.[illegible] | 20 | 6733333.3 | 40400000 | 0 |

[redacted]

Դուրս գրող՝ MARTIROSYAN ARMINE 6205820366

անունը, ազգանունը

23/12/2016 14:42:29

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

### 7. Կողմերի պատասխանատվությունը

...պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետների ..., ինչպես նաև սույն պայմանագրի շրջանակներում Գնորդի սեփականությանը հանձնված Ավտոմեքենայի որակի համար:

...կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար ...հօգուտ Գնորդի գանձվում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

...կողմից սույն պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ավտոմեքենայի հանձնման դեպքում ...հօգուտ Գնորդի գանձվում է նաև տուգանք՝ հանձնման ենթակա Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

...կողմից սույն պայմանագրի 5.3. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա ...է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

... և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում սույն պայմանագրով իրենց ստանձնած պայմանագրային պարտավորությունները լրիվ ...կատարելուց:

### 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

...պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են ...պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը ...չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և ...դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ...մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ...ությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին ...նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

...պայմանագրի շրջանակներում ճանապարհային անանցանելիությունը պարտավորությունների կատարման ժամկետը կասեցնելու համար որ-...պես հիմք կարող է դիտվել այդ մասին Գնորդին պատշաճ ծանուցելու պարագայում:

### 9. Այլ պայմաններ

...պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:

...պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու ...վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

...պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու իրավաբանորեն համազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է Կողմերից ...յուրաքանչյուրի մոտ:

...պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են ...նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով: սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները, ...սույն պայմանագրի բոլոր հավելվածները կցվում են սույն պայմանագրին հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

...պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիպական ...պահանջի հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված՝ համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի ...իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

...այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

...ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
...ք. Երևան, Բայրոնի փող. 3
...ք.Երևան, Ծ.Իսակովի 22
...57589
...ԲԱՆԿ» ՓԲԸ
...5667300100

Վաճառող

ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
Հասցե ԵՐԵՎԱՆ Հյուսիսային Պող. 1
ՀՎՀՀ 02589581
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100

Գ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

...Վճարող /Ստացող
...պաշտպանության նախարարություն
...ԵՐԵՎԱՆ, Բագրևանդ 5
...00867415
...ֆին.գործ.վարչ
...0011144079

...պետ, գեներալ-մայոր
...Տոնոյան

27.07.16

Վճարող

«Ավանգարդ» ՍՊԸ
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 90213015
Հ/Հ 2204101215980000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հանձնման-ընդունման ակտ

«22» Հուլիսի 2016թ.

ք. Երևան

"Տոյոտա Երևան" ՍՊԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն Վահե Գզրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ "Վաճառող", մի կողմից, ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ "Ստացող", մյուս կողմից , և ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ Բաժնետիրական Ընկերություն (ՓԲԸ) և, ՀՀ պաշտպանության նախարարությունը , << Ավանգարդ>> ՍՊԸ-ն՝ "Վճարողներ", հետագա միասին հիշատակման դեպքում՝ "Կողմեր", իսկ առանձին հիշատակման դեպքում՝ "Կողմ", կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.՝

| | |
|---|---|
| Մակնիշը | TOYOTA /Տոյոտա/ |
| Մոդելը | Fortuner 2,7L GAS |
| Թափքի տեսակը | Ունիվերսալ 5 դուռ |
| Գույնը | Սև մետալիկ |
| Թողարկման տ/թ | 2016 թ. |
| Նույնականացման համար | MR1DX8FS400003078 |
| Շարժիչի համարը | A047081 |
| Շարժիչի հզորությունը | 164 ձիաուժ |

**Վաճառող**

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Իրավ.հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3
Գործ.հասցե ք.Երևան, Մ.Խանկոյի 22
ՀՎՀՀ 01557589
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100

Վ.Գզրարյան
Գլխավոր տնօրեն

**Վճարող**

ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
Հասցե ԵՐԵՎԱՆ Հյուսիսային Պող. 1
ՀՎՀՀ 02589581
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100

Գ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

**Վճարող /Ստացող**

ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ֆին.նախ.գործ.վարչ
Հ/Հ 900011144079

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ. պետ, գեներալ-մայոր
Ա. Դավթյան

27.07.16

**Վճարող**

«Ավանգարդ» ՍՊԸ
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 90213015
Հ/Հ 220410121598000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 106

ք. Երևան "31" Օգոստոսի 2015թ.

"Տոյոտա Երևան" ՍՊԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն Վահե Գզրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ "Վաճառող", մի կողմից, ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, այսուհետ՝ "Գնորդ", մյուս կողմից, և Վահե Համբարձումյանը /Անձ.AN0613914, տրվ., 14.08.2013թ. 041 կողմից/, այսուհետ՝ "Վճարող", հետագա միասին հիշատակման դեպքում՝ "Կողմեր", իսկ առանձին հիշատակման դեպքում՝ "Կողմ", կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է ձեռք բերել և Գնորդին ի սեփականություն հանձնել գործարանային արտադրության **2015թ. TOYOTA CAMRY 2.5 մոդելի սև մետալիկ** գույնի թվով 1(մեկ) հատ նոր արտադրված ավտոմեքենա, այսուհետ՝ "Ավտոմեքենա": Ավտոմեքենայի տեխնիկական տվյալները սահմանված են սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հանձնման-ընդունման ակտում:

## 2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Վաճառողը պարտավոր է՝

2.1.1. Գնորդի ցուցումներին համապատասխան, անձամբ ձեռք բերել և վերջինիս հանձնել արտադրող-գործարանի որակի և տեխնիկական չափանիշներին համապատասխանող, շահագործման համար սարքին, պատկանելիքներով կոմպլեկտավորված և պատշաճ ձևակերպված Ավտոմեքենա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով.

2.1.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ավտոմեքենա.

2.2. Վճարողը պարտավոր է կատարել Ավտոմեքենայի ձեռք բերման, փոխադրման և այլ ծառայությունների արժեքի վճարում՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և չափով:

2.3 Գնորդը պարտավոր է՝

2.3.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամանակին ընդունել Ավտոմեքենան,

2.3.2. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել Գնորդին վաճառված Ավտոմեքենան՝ Ավտոմեքենայի պատկանելիքների և փաստաթղթերի հետ միասին.

2.4. Գնորդն իրավունք ունի

2.4.1. անպատշաճ որակի Ավտոմեքենա հանձնվելու դեպքում, իր ընտրությամբ, պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ավտոմեքենայի գինը.

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերանայելու ավտոմեքենայի թերությունները.

գ) հատուցելու ավտոմեքենայի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.4.2. անկոմպլեկտ ավտոմեքենա հանձնելու դեպքում, իր ընտրությամբ, պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ավտոմեքենայի գինը.

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ավտոմեքենան.

## 3. Պայմանագրի գինը, վճարման կարգն ու ժամկետը

3.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 17,442,000 (**Տասնյոթ միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար**) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ի:

3.2 Վճարումները կատարվում է փոխանցումային կարգով՝ Վաճառողի բանկային հաշվեհամարին դրամական միջոցները փոխանցելու միջոցով:

## 4. Երաշխիքային սպասարկումը

4.1. Վաճառողը պարտավորվում է կատարել Ավտոմեքենայի հետագա երաշխիքային սպասարկումը՝ երաշխիքային գրքույկում սահմանված կանոններին համապատասխան՝ Ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց և երաշխիքային գրքույկը

Վաճառողի կողմից հաստատվելուց հետո, կամ 3 (երեք ) տարվա և կամ 100 000 կմ վազքի ընթացքում (կախված նրանից, որը առաջինը կլրանա): Երաշխիքային սպասարկումը ներառում է մեքենայի և նրա պատկանելիքների երաշխիքային սպասարկում, բացի ծախսային նյութերից (յուղ, յուղի զտիչ, օդի զտիչ, և այլն):

4.2.Ավտոմեքենայի երաշխիքային սպասարկումն իրականացնելիս Վաճառողի տեխնիկական սպասարկման կայան Ավտոմեքենայի տեղափոխման պարտականությունն իրականացվում է Գնորդի կողմից:

4.3.Եթե Գնորդն Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումը չի իրականացնում Վաճառողի տեխնիկական սպասարկման կայանում, ապա Վաճառողն ազատվում է սույն պայմանագրի 4.1. կետով նախատեսված երաշխիքային սպասարկում իրականացնելու պարտականությունից:

4.4. Սույն պայմանագրի 4.1 կետում նշված պայմաններով Ավտոմեքենայի երաշխիքային սպասարկման ժամանակ թերությունների հայտնաբերման դեպքում, առանձին մեխանիզմի փոխարինումից կամ վերանորոգումից հետո տվյալ մեխանիզմի հետագա երաշխիքային սպասարկման ժամկետը ներառնվում է 4.1. ենթակետում նշված Ավտոմեքենայի ընդհանուր երաշխիքային սպասարկման ժամկետի և պայմանների մեջ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1.Ավտոմեքենայի հանձնման ժամկետի խախտման դեպքում Վաճառողը յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարում է տույժ՝ վճարված գումարի 0.2%-ի չափով, բայց ոչ ավել, քան պայմանագրի գնի 5%-ը:

5.2. Սույն պայմանագրով նախատեսված վճարները չմուծելու դեպքում՝ Վճարողը պարտավոր է վճարել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար, վճարման ենթակա գումարի 0.2%-ի չափով, բայց ոչ ավել, քան պայմանագրի գնի 5%-ը:

5.3. Տուգանքի և տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լիարժեք կատարումից:

## 6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրով ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

## 7.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1.Ֆորս-մաժորային հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Ֆորս-մաժորային հանգամանքները են համարվում. երկրաշարժը, փոթորիկը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հանրապետական կամ այլ ճանապարհների անանցանելիությունը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական և այլ մարմինների ակտերը, պետական սահմանների փակումը և այլն: Կողմը, որի համար ստեղծվել է ֆորս-մաժորային իրավիճակ, պարտավորվում է հնարավորինս սեղմ և ողջամիտ ժամկետում տեղեկացնել մյուս Կողմին այդ հանգամանքների վրա հասնելու մասին:

7.2. Եթե ֆորս-մաժորային հանգամանքների և դրանց հետևանքների ժամանակահատվածը 3 /երեք/ ամսից ավելի է տևում, ապա պայմանագրի կատարման հետագա ընթացքը որոշվում է Կողմերի երկուստեք համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Վճարողի և Գնորդի փոխհարաբերությունները կրում են նվիրատվության բնույթ: Կողմերը հայտարարում են, որ Վճարողը, սույն պայմանագրով Ավտոմեքենայի համար անհրաժեշտ գումարը,

որպես նվիրատվություն, անհատույց փոխանցում է ի շահ Գնորդի, ուղղակիորեն Վաճառողին:

8.2. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու օրվանից և գործում է մինչև Կողմերի կողմից իրենց պարտավորությունների լրիվ կատարումը:

8.3. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ձևակերպում են գրավոր ձևով և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

8.4. Սույն պայմանագիրը կազմված է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և պահվում են՝ մեկ օրինակը Վաճառողի, մեկ օրինակը Վճարողի, իսկ մեկ օրինակը Գնորդի մոտ: Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզվով, տարընթերցումների դեպքում՝ գերակայում է հայերեն տարբերակը:

**Վաճառող**

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3
ՀՎՀՀ 01557589
"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
Գլխավոր տնօրեն՝
Վ.Գզրարյան

Կ.Տ

**Գնորդ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե ք. Երևան, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 02522157
ՀՀ Ֆին.նախ.գործ.վարչ
Հ/Հ 900011144079
ՀՀ Պաշտպանության նախարար
Ս.Օհանյան

Կ.Տ

**Վճարող**

Համբարձումյան Վահե Կամոյի
Անձ. AN0613914
Հասցե ք. Կապան, Շահումյան փ., շ.19, բն.40

Մատակարարի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Մատակարարից հօգուտ Գնորդի գանձվում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

Մատակարարի կողմից սույն պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ավտոմեքենայի հանձնման դեպքում Մատակարարից հօգուտ Գնորդի գանձվում է նաև տուգանք՝ հանձնման ենթակա Ավտոմեքենայի գնի 0,05%-ի չափով:

Գնորդի կողմից սույն պայմանագրի 5.3. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում սույն պայմանագրով իրենց ստանձնած պայմանագրային պարտավորությունները լրիվ ծավալով կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն պայմանագրի շրջանակներում ճանապարհային անանցանելիությունը պարտավորությունների կատարման ժամկետը կասեցնելու համար որպես հարգելի հանգամանք կարող է դիտվել այդ մասին Գնորդին պատշաճ ծանուցելու պարագայում:

## 9. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու իրավահավասար օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է Կողմերից յուրաքանչյուրին:

Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով: սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև սույն պայմանագրի բոլոր հավելվածները կցվում են սույն պայմանագրին հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիպական պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված՝ համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Վաճառող | Վճարող |
|---|---|
| «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ | ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| Իրավ.հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3 | Հասցե ԵՐԵՎԱՆ Հյուսիսային Պող. 1 |
| Գործ.հասցե ք.Երևան, Ս.Իսակովի 22 | ՀՎՀՀ 02589581 |
| ՀՎՀՀ 01557589 | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | Հ/Հ 1570003731650100 |
| Հ/Հ 15700-03667300100 | |
| Գ.Գզիրյան | Գ.Գրիգորյան |
| Գլխավոր տնօրեն | Գործադիր տնօրեն |

Ստացող

ՀՀ պաշտպանության նախարարություն

Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, Բագրևանդ 5

ՀՎՀՀ 00867415

ՀՀ ֆին.նախ.գործ.վարչ

Հ/Հ 900011144079

ՀՀ պաշտ.նախ.սվ. պետ, գեներալ-մայոր

Ս.Չիլինգարյան

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

Մատակարարվող Ավտոմեքենայի մակնիշը,
տեսակը, կոմպլեկտայնությունը և քանակը

| Հ/Հ | Ավտոմեքենայի մակնիշը, տեսակը և կոմպլեկտայնությունը | Չ/Մ | Քանակը | Միավորի գինը ՀՀ դրամ | Ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | TOYOTA Hilux 2.5L T/D | հատ | 1 | 15,050,000 | 15,050,000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 15,050,000 |

Վաճառող

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ
Իրավ.հասցե ք. Երևան, Բայրոնի փող. 3
Գործ.հասցե ք.Երևան, Ս.Իսակովի 22
ՀՎՀՀ 01557589
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100

Վ.Գզրարյան
Գլխավոր տնօրեն

Վճարող

ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
Հասցե ԵՐԵՎԱՆ Հյուսիսային Պող. 1
ՀՎՀՀ 02589581
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100

Գ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Ստացող

ՀՀ պաշտպանության նախարարության
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, Բագրևանդ 5
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ֆին.նախ.գործ.վարչ
Հ/Հ 900011144079

ՀՀ պաշտ.նախ.ավ. պետ, գեներալ-մայոր
Մ.Չիլինգարյան

15ի

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՓԾՀԱՊՁԲ-4/2-1

ք. Երևան «10» 07. 2015թ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և "Տոյոտա Երևան" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին /այսուհետ՝ Ստացող/ մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ ՀՀ, ք. Երևան, Արշակունյանց 2-րդ նրբանցք հասցեով:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են՝ 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են՝ 30 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի ամապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս ասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու անքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, այն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված արքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և կետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամգիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի ար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ պես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ րդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի նք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել անքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի ակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու անության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը ասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ երը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված ը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **251 160 000 հարյուր հիսունմեկ միլիոն հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի ան հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը ցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները րդի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման- ման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում Պայմանագրի ն ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան 25.12.2015թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական արտի պահանջներին:

5.2 Սույն Պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից **հաշված՝ 3 տարի կամ 100 000 կմ:**

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև ...ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ...է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

...մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ...նում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու ...(Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը ...ապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման ...ները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված ...ները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ...ում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու ...աբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի ...ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող ...անքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանա-...ը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ ...մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման ...Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն ...մատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են ...ողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու ...յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ ...երորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ ...յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ...ողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ...տարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ ...տարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում ...պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն ...պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ...երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական ...ուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և ..., որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ...ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ ...մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության ...վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև ...պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ...որված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ...ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե ...արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի ...Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի ...կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ...ինկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով ...Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ...ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ...ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ ...հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

...ագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր ...ձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ ...ձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ...ների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է ...տանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը ...ագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի ...րոծման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է ...աձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները ...րություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման ...կում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի ...վորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և ...ից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ ...րքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ...ությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության ...րությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների ...ման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ...ությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի ...պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական ...ցումների նվազեցումը:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք ...ու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Սույն Պայմանագիրը կազմված է՝ 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր ...աբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 ...վածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության ...ունքը:

9.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ...տեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ ՍՊ ...ությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **"Տոյոտա Երևան" ՍՊԸ** |
| ...րևան Բագրևանդի 5<br>...ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>...900011144079<br>...ՀՀ 00867415<br>...պաշտպանության նախարարի տեղակալ-<br>...Ս դեպարտամենտի պետ | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22<br><Ամերիա բանկ> ՓԲԸ,<br>Հ/Հ 1570003667300100<br>ՀՎՀՀ 01557589<br>Տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Վ. ԳԶՐԱՐՅԱՆ |

154

Հավելված N 1
N ՓՇՀԱՊՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագրի

**Գնման ենթակա ապրանքների**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**1. "ՋԻՊ (ՌԱՎ-4 2.0 CVT պրեստիժ)" հատուկ նշանակության**

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
|---|---|
| Ընդհանուր պահանջարկը | |
| …արտը | Արտադրող գործարանում գործող տեխնիկական պայմաններին համապատասխան |
| …ի տեսակը | բենզինային 4-գլան/ Valvematic |
| …ի հզորությունը | 158 ձիաուժ 2.0լ |
| …, երկարություն/լայնություն/բարձրություն | 4570/1845/1670 |
| …ման տուփը | 7-աստիճան վարիատորային (CVT) փոխանցումատուփ |
| …ավորումը | ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ) |
| | VSC (կուրսային կայունության համակարգ) |
| | EPS (ղեկի էլեկտրաուժեղարար) |
| | HAC (օժանդակ համակարգի բարձունք հաղթահարելու համակարգ) |
| | Կլիմատ կոնտրոլ՝ առանձնացված 2 գոտիներով, 9 անվտանգության բարձիկ, առջևի նստատեղերի տաքացում |
| | Լրիվ էլեկտրափաթեթ (բոլոր ապակիների և հայելիների էլ. կառավարում) |
| | Կենտրոնական փական, շարժիչի մեկնարկումը "Start-stop" կոճակի օգնությամբ |
| | Կաշեպատ սրահ, ցոլ՝ էլեկտրական կառավարմամբ, 6 բարձրախոս, նստատեղերի տաքացում |
| | Ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ և շարժական ղեկանիվ |
| | Սենսորային մ[illegible]ր՝ CD/MP3/Bluetooth և AUX/USB հնարավորություններով |
| | Առջևի հակամշուշային լապտերներ, անձրևի և լույսի սենսորներ, կայանման սենսորներ, հետադարձ տեսախցիկ, բեռնախցիկի դռան էլեկտրակառավարում |
| …ային լուսածերպը | 197 մմ |
| …երը | 5 նստեղատեղ (ներառյալ վարորդինը) |
| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
| …ման տարեթիվը | 2015թ |
| …իճակ | Նոր չօգտագործված, վազքը մինչև 1000 կմ |
| [illegible] | 3 տարի կամ 100.000 կմ (ըստ երաշխիքային սպասարկման գրքույկի) |
| …ումը | ինքնափոխադրում Վաճառողի կողմից |
| [illegible] | Սպիտակ |
| …երը | 265/65 R17 չափսի անվադողեր՝ թեթևաձույլ սկավառակներով |

…դողերը և կուտակիչ մարտկոցը՝ 2015թ. արտադրության:

…քենաները պետք է լինեն սպասարկված:

…անքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (ք.Երևան Արշակունյանց 2-րդ նրբանցք):

**2. "ՋԻՊ (Տոյոտա Լենդ Կրուզեր Պրադո 2.7)" հատուկ նշանակության**

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
|---|---|
| Ընդհանուր պահանջարկը | |
| …արտը | Արտադրող գործարանում գործող տեխնիկական պայմաններին համապատասխան |
| …տեսակը | բենզինային 4-գլան/16 փական VVT-i շարժիչ |
| …ությունը | 163 ձիաուժ 2.7լ |
| …րկարություն/լայնություն/բարձրություն | 4760/1885/1890 |
| …ման տուփը | 4-աստիճան ավտոմատ փոխանցումատուփ |
| …վորումը | ABS (Արգելակների ապաբլոկավորման համակարգ) |
| | VSC (կուրսային կայունության համակարգ) |
| | Traction control (TRC)՝ քաշող անիվների հակասեղապտուտային համակարգ |
| | 9 անվտանգության բարձիկ |

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
|---|---|
| | Կոնդիցիոներ |
| | Լրիվ էլեկտրափաթեթ (բոլոր ապակիների և հայելիների էլ. կառավարում) |
| | Կենտրոնական փական |
| | Թափշյա սրահի ձևավորում |
| | Ինտերակտիվ բազմաֆունկցիոնալ և շարժական ղեկանիվ |
| | Սենսորային մոնիտոր՝ CD/MP3/Bluetooth և AUX/USB հնարավորություններով |
| | Առջևի հակամշուշային լապտերներ |
| ...ային լուսածերպը | 240 մմ |
| ...ման տարեթիվը | 2015թ |
| ...իճակը | Նոր չօգտագործված, վազքը մինչև 1000կմ |
| ...իքը | 3 տարի կամ 100.000 կմ (ըստ երաշխիքային սպասարկման գրքույկի) |
| ...ումը | ինքնափոխադրում Վաճառողի կողմից |
| ... | սև |
| ...ները | 265/65 R17 չափսի անվադողեր՝ թեթևաձույլ սկավառակներով |

...դողերը և կոտակից մարտկոցը՝ 2015թ. արտադրության:

...քենաները պետք է լինեն սպասարկված:

...րանքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (ք.Երևան Արշակունյանց 2-րդ նրբանցք):

**3. "Փոքրածավալ բեռնատարներ (Պիկապներ) (Տոյոտա Հայլուքս 2.5 ՏԴԻ)" հատուկ նշանակության**

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
|---|---|
| **Ընդհանուր պահանջարկը** | |
| ...արտը | Արտադրող գործարանում գործող տեխնիկական պայմաններին համապատասխան |
| ...ի տեսակը | 2KD-FTV, դիզելային շարքային 4-գլան/16 փական |
| ...ի հզորությունը | 102 ձիաուժ 2.5լ |
| ...ր. երկարություն/լայնություն/բարձրություն | 5260/1760/1850 |
| ...մնի չափերը՝ | 1545/1515/450 |
| ...ցման տուփը | 5-աստիճան, մեխանիկական |
| ...ի տեսակը՝ | 4-դռնանի պիկապ |
| | ABS (արգելակների ապաբլոկավորման համակարգ) |
| | 2 անվտանգության բարձիկ |
| | Կոնդիցիոներ |
| ...ավորումը | Ղեկի հիդրոուժեղարար |
| | Կոնդիցիոներ |
| | Թավշյա սրահ, 2 բարձրախոս |
| | Հետևի դիֆերենցիալի բլոկավորում |
| ...ային լուսածերպը | 212 մմ |
| ...ները | 5 նստեղատեղ |
| ...ման տարեթիվը | 2015թ |
| ...իճակը | Նոր չօգտագործված, վազքը մինչև 1000կմ |
| ...իքը | 3 տարի կամ 100.000 կմ (ըստ երաշխիքային սպասարկման գրքույկի) |
| ...ումը | ինքնափոխադրում Վաճառողի կողմից |
| ... | Կամուֆլյաժ |
| ...րթակը | Աղեղներով և վրանածածկով |
| ...ները | 205R16C 6J |

...դողերը և կուտակիչ մարտկոցը՝ 2015թ. արտադրության:

...քենաները պետք է լինեն սպասարկված:

...րանքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (ք.Երևան Արշակունյանց 2-րդ նրբանցք):

**4. "Հատուկ մասնագիտացված մեքենաներ (Ռեանիմոբիլ Տոյոտա Լենդ Կրուզեր) հատուկ նշանակության**

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված շահագործման ձեռնարկի |
|---|---|
| **Ընդհանուր պահանջարկը** | |
| ...արտը | Արտադրող գործարանում գործող տեխնիկական պայմաններին համապատասխան |
| ...ի տեսակը | Դիզելային շարժիչ, շարքային 6-գլան |
| ...ի հզորությունը | 131 ձիաուժ 4.2լ |
| ...ր. երկարություն/լայնություն/բարձրություն | 5220/1790/1970 |
| ...ցման տուփը | 5-աստիճան, մեխանիկական |
| | Կոնդիցիոներ |
| | Ղեկի հիդրոուժեղարար |
| | Աուդիոհամակարգ՝ CD/MP3 հնարավորություններով |
| ...ավորումը | Ռադիո AM/FM ընդունիչ |
| | Միջլիսեռային դիֆերենցիալի բլոկավորում |
| | Առջևի արգելակները՝ սկավառակային |
| | Հետևի արգելակները՝ թմբուկային |

| Տեխնիկական ցուցանիշներ | Ըստ արտադրության գործարանի կողմից սահմանված չափագործման ձեռնարկի |
|---|---|
| ...րիային լուսածերպը | 230 մմ |
| ...երը | 5 նստելատեղ |
| ...ման տարեթիվը | 2015թ |
| ...ման | Նոր չօգտագործված, վազքը մինչև 1000կմ |
| ... | 3 տարի կամ 100.000 կմ (ըստ երաշխիքային սպասարկման գրքույկի) |
| ...մը | Ինքնափոխադրում Վաճառողի կողմից |
| ... | Սպիտակ, կապույտ գույնի հատուկ նշագծումով |
| ...երը | 225/95 R16 5.5OF |
| ...վածությունը | Կահավորված հատուկ ձայնային և լուսային ազդանշաններով |
| ...րի համալրման անհրաժեշտ բժշկական ...րումներ | Համաձայն հավելվածի |

...վարողները և կոտակիչ մարտկոցը՝ 2015թ. արտադրության:
...քենաները պետք է լինեն սպասարկված:
...րանքները պետք է հանձնվեն ԱՆ կենտրոնական պահեստ (ք.Երևան Արշակունյաց 2-րդ նրբանցք):

Հավելված N 2
N ՓՇՀԱՊՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագրի

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ապրանքի անվանում | | Չ/Մ | Քանակ | Մեկ միավ. գին /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Գնման ժամանակացույց. քանակներն՝ ըստ 2015թ համապատասխան եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ |
| Ջիպեր | "ՋԻՊ (ՌԱՎ-4 2.0 CVT պրիստիժ)" հատուկ նշանակության | հատ | 1 | 19,200,000 | 19,200,000 | 1 |
| Ջիպեր | "ՋԻՊ (Տոյոտա Լենդ Կրուզեր Պրադո 2.7)" հատուկ նշանակության | հատ | 2 | 21,600,000 | 43,200,000 | 2 |
| Փոքրածավալ բեռնատարներ | Փոքրածավալ բեռնատարներ (Պիկապներ) (Տոյոտա Հայլուքս 2.5 ՏԴԻ)" հատուկ նշանակության | հատ | 12 | 12,730,000 | 152,760,000 | 12 |
| Հատուկ նշանակության մեքենաներ | "Հատուկ մասնագիտացված մեքենաներ (Ռեանիմոբիլ Տոյոտա Լենդ Կրուզեր) հատուկ նշանակության | հատ | 1 | 36,000,000 | 36,000,000 | 1 |
| Ընդամենը | | | | | 251,160,000 | |

Հավելված N 3
N ՓՇՀԱՊՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Չափա...ժնի համար | CPV կոդը | Ապրանքի անվանում | Ընդհանուր գումար /դրամ/ | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ., ընդ որում՝ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | III եռամսյակ | IV եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2015թ |
| 1 | 34111150/1 | Ջիպեր | 19,200,000 | 19,200,000 | 19,200,000 |
| 2 | 34111150/2 | Ջիպեր | 43,200,000 | 43,200,000 | 43,200,000 |
| 3 | 34131100/1 | Փոքրածավալ բեռնատարներ | 152,760,000 | 152,760,000 | 152,760,000 |
| 4 | 34141150/1 | Հատուկ նշանակության մեքենաներ | 36,000,000 | 36,000,000 | 36,000,000 |

*...րման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն | **"Տոյոտա Երևան" ՍՊԸ**

...շտպանության նախարարի տեղակալ-
...պարտամենտի պետ

Տնօրեն

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Վ. ԳԶՐԱՐՅԱՆ